
ՀՈՒՆԱԿԱՆ ՄԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ
ՆՎԱՃՄԱՆ ՄԱՍԻՆ

ՄԱՐԻԱ ԲՐՈՒՏՅԱՆ

Համաշխարհային պատմության մեջ 1453 թ. մայիսի 29-ին թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավումը համարվում է շրջադարձային իրադարձություն: Երբեմնի հզոր Բյուզանդական կայսրությունն իր վախճանը կնքեց մահ-մեղականների վայրագ հարվածներից: Չնայած հույների ջանքերին, Ֆլորենցիայի ժողովում կատարած զիջումներին՝ նրանք թուրքական արհավիրքի նախօրյակին չկարողացան ստանալ դավանակից որևէ պետության օժանդակությունը¹:

Հույն ժողովրդի սիրանքը բավական մանրամասն է նկարագրվել Կ. Պոլսի անկումը ներկայացնող սկզբնաղբյուրներում: Ընդհանուր առմամբ, այս շրջանի հունական պատմագրությունը գաղափարապես միատարր չէ: Կապված Ֆլորենցիայի ժողովում հույների դիրքորոշման հետ՝ առկա էին երեք հոսանքներ՝ լատինամետ, որի ակնառու ներկայացուցիչներից էր Միքայել Դուկասը, ազգային-ուղղափառ՝ Գեորգիոս Սֆրանձին: Այս երկու հոսանքներն ավելի արմատական էին և ավելի շատ հետևորդներ ունեին, քան երրորդ՝ թուրքամետ հոսանքը: Վերջինս համեմատաբար ավելի ուշ էր առաջ եկել և պատրաստ էր թուրքերի հետ համագործակցության: Հոսանքի ներկայացուցիչներն էին Գրիտովուլոսը, Լառնիկ Խալկոկոնդիլեսը և ուրիշներ: Չնայած գաղափարական հակադրություններին՝ նրանք բոլորն էլ խանդավառությամբ են նկարագրում հույների հաղթանակները և մեծ վշտով պատմում Կոստանդնուպոլսի գրավման, կողոպուտի և ավերման մասին:

Հույն պատմիչներից իրադարձությունների միակ ականատեսը Գ. Սֆրանձին է: Նա ծնվել է կա՛մ Պելոպոնեսում 1401-ից հետո, կա՛մ Կոստանդնուպոլսում՝ 1400-ին²: Տասնվեց տարեկանում նա աշխատել է Մանուել II կայսեր պալատում: Որպես ժամանակի հմուտ դիվանագետ՝ մասնակցել է 1424 թ. փետրվարի 22-ին սուլթանի հետ հաշտության պայմանագրի կնքմանը: Եղել է Մանուել կայսեր զավակների ուսուցիչը: Հատկապես մեծ էր նրա համակրանքը Կոստանդինի նկատմամբ, որին համարում էր իր բարեկամն ու գաղափարակիցը³: Նա մինչև իր կյանքի վերջը մնաց կայսերը հավատարիմ. նույնիսկ ներկա է եղել նրա մահվանը և այսպես է նկարագրում այն. «Իր (կայսեր – Մ.

¹ 1439 թ. Հռոմի պապը Ֆլորենցիա էր հրավիրել հունական պատվիրակությանը՝ իր օգնության դիմաց առաջարկելով ընդունել կաթոլիկ եկեղեցու գերագահությունը: Թուրքական վերահաս վտանգը ստիպել էր հույներին կնքել ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիների միության ակտը:

² С. Р а н с и м е н. Падение Константинополя в 1453 г. М., 1983, с. 169.

³ Е. Д ж а г а ц п а н я н. Мировоззрение византийского историка XV в. Георгия Сфрандзи.– “Кавказ и Византия”, вып. 3, Ереван, 1962, с. 46.

Բ.) մահը, իր հավատարիմ զինվորներուն զլուխը անցած, անոնց հետ կոպող ու անոնց հետը մեռնող հերոսի մը մահը եղավ⁴:

Մֆրանձին դիվանագիտական ակտիվ գործունեություն էր ծավալել 1428–1452 թթ. թուրքական արշավանքների ժամանակ, ընդգրկվել Ֆլորենցիա գնացող հունական պատվիրակության կազմի մեջ՝ ներկայացնելով ազգային-ուղղափառ հոսանքը⁵: Նա, աղետաբեր համարելով կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների միավորումը, միաժամանակ բարձր է գնահատել Կոստանդինի՝ եկեղեցիների միացման ակտը կնքելը՝ հիմնավորելով, որ դա իրականացվել է հանուն կայսրության ապագայի և նրա քաղաքական շահերի⁶:

Կոստանդնուպոլսի գրավումից հետո Մֆրանձին ձերբակալվել է թուրքերի կողմից, սակայն կարճ ժամանակ անց՝ ազատվել: Բնչը, թերևս, բացատրվում է Մֆրանձի նկատմամբ՝ Մեհմեդի ունեցած հարգալից վերաբերմունքով: Նրա անունը հիշատակվում էր որպես առաջինն այն հույներից, որոնց 1454 թ. դեկտեմբերի 26-ին սուլթանը տվել էր անվտանգության և անձեռնմխելիության երաշխիք⁷: Մտանալով ազատություն՝ Մֆրանձին առանձնացել է Կորֆու կղզու վանքերից մեկում, որտեղ էլ գրել է իր աշխատությունը՝ «Քրոնիկոնը»: Հեղինակը շարադրում է Մանուել և Հովհաննես կայսրերի կենսագրությունը, հիացմունքով է նշում նրանց հերոսական արարքների մասին, պարսավում Թեոդոր և Դիմիտրի Պալեոլոգոսներին, որոնք երկրի համար վճռական պահին երես թեքեցին կայսրից: Նա ամենուր քննադատում է Լուկաս Նոտարասին՝ դավաճանության համար:

Հեղինակի գործում առկա որոշ հակասություններ կարելի է բացատրել նրանով, որ նա իր աշխատանքը շարադրել է ավելի ուշ և որոշ փաստեր մոռացության է մատնել: Մֆրանձին շարադրելով դեպքերի ընթացքը՝ հաճախ ներկայացնում է նաև իր կարծիքը. բյուզանդական կայսրության թուլացման ու անկման հիմնական պատճառներից մեկը նա համարում է այն, որ մյուս քրիստոնյա պետությունները ոչինչ չարեցին հույներին օգնելու համար⁸: Այնուամենայնիվ, պատմագիտությունը բարձր է գնահատում Մֆրանձի աշխատանքը: Այն գրված է պարզ շարադրանքով, բավական գրագետ ոճով և շատ քիչ է սուրյեկտիվ վերաբերմունքը որևէ հանգամանքի նկատմամբ: Որպես ականատես, նա մանրամասն նկարագրել է Կոստանդնուպոլսի անկման և դրան առնչվող իրադարձությունները⁹:

Նախքան հունարեն բնագրի հրատարակությունը, ասպարեզում է եղել գրքի լատիներեն թարգմանությունը՝ իրականացված Հակոբ Պոնտանոսի կողմից: Մաշտոցի անվան Մատենադարանում հայտնաբերվել է «Պատմութիւն

⁴ Գ. Շ լ յ ու մ բ ե թ է. Կ. Պոլսո պաշարումը, առումը և թալանը, Պոլիս, 1914, էջ 274:

⁵ Մֆրանձի ու Կոստանդինի բարեկամությունը հատկապես ամրացավ այն ժամանակ, երբ նա ամուսնացավ կայսեր ազգականուհիներից մեկի հետ. տե՛ս С. Ра н с и м е н. Նշվ. աշխ., էջ 169: Μεγάλη Ελληνική Εγκυκλοπαίδεια, Αθήναι (1926–1934), τ. 22, σ. 189.

⁶ Μεγάλη Ελληνική Εγκυκλοπαίδεια, Αθήναι, τ. 22, σ. 189. А. Л е б е д е в. История греко-восточной церкви под властью турок. Сергиев Посад. 1896, с. 29.

⁷ Е. Д ж а г а ц п а н я н. Նշվ. հոդվ., էջ 46:

⁸ Նույն տեղում, էջ 51:

⁹ Μεγάλη Ελληνική Εγκυκλοπαίδεια, Αθήναι, τ. 22, σ. 190.

Յունաց տերութեան և Կոստանդնուպոլսոյ առման» վերնագրով Մֆրանձիի աշխատության հայերեն անտիպ թարգմանությունը, որը շատ հարագատ է բնագրին: Այն ընդգրկում է վերջին Պալեոլոգոսների շրջանից մինչև Կոստանդնուպոլսի անկումը և որոշ տեղերում լրացնում ու պարզաբանում է հունարեն տարբերակը¹⁰:

Ձեռագրում նկարագրվում է հույների հերոսական պաշտպանությունը. «...և միւս մակուկաց զմինն ընկղմէցին, և զմասն մարդկանց ըմբռնէցին, ... և անբարիշտ ամիրայն հրամայեաց ը առաւօտն զամենեսեան առանց գթութեան մահացուցին, ի տիրութիւն մերում, և ողբ կոծ եղև Վասն նոցա...»¹¹: Հետաքրքիրն այն է, որ Մֆրանձիի դրական գույներով է նկարագրում Մեհմեդին. «...ի մարտս և ի կատարութիւնս ծանրագոյն եղև, և մանուկ գործունիայ և հզոր ամի զառաքինի և զհմաստուն արս սիրէր ... սիրէր ընթիառնուլ միշտ զկեանս Աղէքսանդր թագաւորին և Օգոստոսի կայսեր, Կոնստանտինոսի Մեծին և Փլավիոսի, և Թէոդորոսի...»¹²:

Կոստանդնուպոլսի անկման մասին մեզ կարևոր տեղեկություններ է տալիս Ժամանակակից և իրադարձությունների մասնակի ակնատես Միքայել Դուկասը: Այս հեղինակի մասին կենսագրական կցկտուր տեղեկություններից հայտնի է, որ քաղաքի գրավման ժամանակ եղել է Քիոս կղզում: Նա ակտիվ կապեր է ունեցել ջենովացիների հետ, և կարծիք կա, որ շատ իրադարձություններ վերարտադրել է ջենովացի գործակալների և առևտրականների պատմածներից: Մա է պատճառը, որ նրա աշխատանքը պարունակում է որոշ անճշտություններ ու թերություններ¹³: Իր քաղաքական հայացքներով Դուկասը հակված էր կաթոլիկությանը, հարում էր Հռոմին ու Եվրոպային, և ամենուր երևում է նրա քննադատական վերաբերմունքը գաղափարական հակառակորդների նկատմամբ:

Դուկասի աշխատանքն ընդգրկում է 1341–1462 թթ.: Հեղինակը նկարագրում է Ղալաթիայի նվաճումը: Երբ Ղալաթիայի դարպասները բացվել են ջենովացի բնակիչների կողմից, Չագանոս փաշան երդումներով հավաստիացրել է և գոչել. «Մի՛ հեռացեք», «Մի՛ վախեցեք»: Այս խոսքերից հետո բնակչության մի մասը ինքնակամ հանձնվել է թուրքերին¹⁴: Դուկասը նշում է, որ Մեհմեդը քաղաքը գրավելուց միայն հինգ օր հետո է մտել Ղալաթիա, երբ բնակչության մեծ մասն արդեն լքել էր այն: Սուլթանի հրամանով գետնին են հավասարեցվել Ղալաթիայի դարպասները և ծայրամասային թաղամասերը, չնայած հետո

¹⁰ Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. № 2644: Ձեռագրի հայտնաբերման գործում անգնահատելի է Հ. Անայանի աշխատանքը (տե՛ս Հ. Ա. և Ա. Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 441–447):

¹¹ ՄՄ, ձեռ. № 2644, թ. 203 ա: Կոստանդնուպոլսի առման, թուրքերի հետագա նվաճումներին է անդրադարձել XVII դարի հեղինակ Վարդան Բաղիշեցին (տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII–XVIII), հ. II, կազմ. Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 392–393):

¹² ՄՄ, ձեռ. № 2644, թ. 149 բ: Նմանատիպ տողեր ունի նաև նվաճողով հիացած Կրիստոփոլոսը, ըստ որի, Մեհմեդը ուսումնասիրել էր արարների, պարսիկների, օսմանների գրառումները հույների վերաբերյալ, ինչ-որ թարգմանված է եղել արաբերեն ու պարսկերեն (տե՛ս K r i t o v o u l o s. History of Mehmed the Conqueror. Princeton, 1954, p. 14):

¹³ С. Р а н с и м е н. Նշվ. աշխ., էջ 170:

¹⁴ M. D u c a s. Historia Byzantina. Bonnae, 1834, p. 296.

հրամայվել է վերականգնել դրանք¹⁵: Ըստ մեկ այլ ականատեսի՝ Կրիտովուլոսի՝ Ղալաթիայի բնակչությունը ինքնակամ հանձնվել էր թուրքերին և փրկվել ավերածություններից ու կոտորածներից¹⁶: Դժվար թե Մեհմեդը ավերածությունների ենթարկեր արդեն իսկ իրեն հանձնված Ղալաթիան: Դուկասը մանրամասնորեն նկարագրել է հույների հերոսական պաշտպանությունը և խոր ցավ ապրել Կոստանդնուպոլսի գրավման համար. «Օ՛, քաղաք, քաղաք, քաղաքների ամենագլխավորն ու 40 աշխարհների կենտրոնը, քրիստոնյաների գովեստի և ստոր մահմեդականների նվաճումների քաղաք...»¹⁷:

Չնայած հեղինակը հաղորդում է որոշ հակասական տվյալներ, այդուհանդերձ Դուկասի աշխատանքը արժեքավոր է և բավական կարևոր, քանի որ նա տեղեկություններ է հաղորդում թե՛ Ֆլորենցիայի ժողովի և թե՛ Կոստանդնուպոլսի գրավման մասին: Դուկասը թուրքամետ չէ, սակայն ընդգծում է կորսվածի արժեքը նույնիսկ նվաճողի համար: «Սուլթանն ինքը սվինահարեց իր գորավարներից մեկին, որը քանդում էր Ս. Սոֆիայի մարմարե սալահատակը»¹⁸, – գրում է նա:

Լ. Խալկոկոնդիլեսը համարվում է վերջին աթենական պատմիչը. ծնվել է մոտ 1430 թ. և մահացել 1490 թ.: Մեզ է հասել նրա «Պատմություն» աշխատությունը և մի քանի մանր գրվածքներ: Խալկոկոնդիլեսը բնակվել է Աթենքում, սակայն կյանքի մեծ մասն անցկացրել է Պելոպոնեսում: Իր աշխատությունում նա անդրադարձել է օսմանյան պետության պատմությանը մինչև 1463 թ.: Հեղինակը չի եղել քաղաքի անկման ականատեսը, բացի այդ, նա իր աշխատությունը գրել է մոտ 1480 թ.: Թերևս սա է պատճառը, որ աշխատությունում նկատվում են հակասական որոշ տվյալներ: Իր քաղաքական հայացքներով նա ինչ-որ տեղ հարել է թուրքամետ հոսանքին և դեմ է եղել եկեղեցիների միավորմանը¹⁹:

Կոստանդնուպոսի անկումը նկարագրել է ազգությամբ հույն, հայացքներով թուրքամետ Կրիտովուլոսը: Այս հեղինակը բեկում է առաջացրել Բյուզանդիայի վերջին շրջանի պատմագրության մեջ, քանի որ նրա՝ «Մեհմեդ նվաճողի պատմությունը» աշխատությունը սկզբից մինչև վերջ ձոն է՝ նվիրված Մեհմեդին ու նրա «աստվածահաճո» գործերին: Կրիտովուլոսի երկը միակ սկզբնաղբյուրն է, ուր առկա են վկայություններ թե՛ թուրքական և թե՛ հունական բանականներում կատարվող իրադարձությունների մասին: Նրա կենսագրական մանրամասները հայտնի չեն: Իր մասին գրում է, որ ծնվել է Իմբրոս կղզում, իրեն անվանում է Իմբրոսի ճանաչված քաղաքացիներից մեկը²⁰: Այն, որ Կրիտովուլոսը Իմբրոսի հայտնի ընտանիքներից էր, վկայում է Կիրիակոս Անկոնացին, որը

¹⁵ Նույն տեղում, էջ 312:

¹⁶ K r i t o v o u l o s . Նշվ. աշխ., էջ 76:

¹⁷ M . D u c a s . Նշվ. աշխ., էջ 306:

¹⁸ Նույն տեղում, էջ 298:

¹⁹ З . В . У д а л ь ц о в а . Борьба партий в Византии XV в. и деятельность Виссариона Никейского. – «Византийский временник», Т. II, М.–Л., 1949, с. 296. Μεγάλη Ελληνική Εγκυκλοπαίδεια, Αθήναι, τ. 24, σ. 189.

²⁰ Critobul din Imbros. Din domnia lui Mahomed al 11-lea anni 1451-1467, ed. De Vasile Grecu, Bucuresti, 1963, p. 33; K r i t o v o u l o s . Նշվ. աշխ., էջ 9:

նշում է, որ 1444 թ. Իմբրոս կատարած իր այցելության ժամանակ իրեն ուղեկցել է հայտնի իմբրոսացի Կրիտովուլոսը²¹:

Կրիտովուլոսի վկայությամբ քաղաքի գրավման ժամանակ ինքը եղել է հայրենի կղզում: Դա նշանակում է, որ նա Կոստանդնուպոլսի գրավման ականատեսը չէ: Սակայն հետագա իրադարձությունները՝ քաղաքի վերաբնակեցումը, վերակառուցումը, պատրիարքի նշանակումը, կատարվել են նրա ներկայությամբ, քանի որ տվյալ ժամանակաշրջանում նա աշխատել է Մեհմեդ II-ի արքունիքում: Աշխատանքն ընդգրկում է վերջինիս՝ 1451 թ. գահ բարձրանալուց մինչև 1467 թ.՝ նկարագրելով Մեհմեդի նվաճումները, Կոստանդնուպոլսի վերաբնակեցումը և այլն:

Թերևս հեղինակը ցանկացել է գրել ճշմարտությունը՝ համեմատելով իր ձեռքի տակ եղած փաստերը: «Չնայած մինչ այս շատերն են պատմել այս դեպքերի մասին, սակայն նրանք չեն պատմել համակարգված, ոչ էլ կարգավորել են, ինչպես հարկն է.. Ես գրի եմ առնում այս պատմությունը իմ սեփական ուսումնասիրությունների ու իմ ժամանակակիցների տվյալների հիման վրա՝ որպես խիզախության ու քաջության իսկական մոդել»²², – ասում է հեղինակը: Այս տողերից երևում է, որ բավականին տուրք է տվել սեփական կարծիքին: Կրիտովուլոսը բնական է համարում այն, որ հետագա ուսումնասիրողների քննադատական հայացքից չի վրիպի իր պատմությունը, ուստի խնդրում է մրցակիցներին՝ չքննադատել իրեն հիմարության կամ կամակորության համար²³:

Կրիտովուլոսը հարգանքով է գրում Մեհմեդ II-ի մասին, ցավով՝ իր հայրենակիցների կատարած սխալների, որոնք նա ցանկանում է ջրի երես հանել. «Ես նախընտրում եմ գրել և բացահայտ ներկայացնել ծաղրական պահերը մեր չարիքների, որոնք ոմանց տեսակետից ավելի լավ է թաքցնել և չկենտրոնացնել հասարակության ուշադրությունը դրանց վրա: Ես ոչ մի առավելություն չեմ տա իմ ազգին, չեմ չարախոսի, քանի որ դա չէ իմ ներկա աշխատանքի նպատակը»²⁴: Հեղինակը, հաշվի առնելով դեպքերի զարգացման օրինաչափ ընթացքը, բնական է համարում բյուզանդական իշխանության անկումը և նոր իշխանության հանդես գալը. «Ես այնքան թերի չեմ դատելու մեջ և անտեղյակ չեմ մարդկային գործերին, որ չճանաչեմ նրանց ճակատագիրը և փոփոխությունները»²⁵: Բավական չեզոք այս տողերի միջոցով պատմագիրը, թվում է՝ հող է նախապատրաստում հետագա քննադատությունից խուսափելու համար, բացատրում, որ Մեհմեդի կատարած սխրանքները եզակի են, որոնք պատմությունը երբեք չի տեսել²⁶: Սա էլ վառ ապացույց է նրա թուրքամետության:

Ստույգ հայտնի չէ Մեհմեդ II-ի վերաբերմունքը Կրիտովուլոսի և նրա աշխատանքի նկատմամբ: Հայտնի չէ նաև ձեռագրի հետագա ճակատագիրը, սա-

²¹ З. В. У д а л ь ц о в а. Предательская политика феодальной знати Византии в период турецкого завоевания.– “Византийский временник”, т. VII, М., 1953, с. 108.

²² K r i t o v o u l o s. Նշվ. աշխ., էջ 9:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում էջ 11:

²⁵ Նույն տեղում, էջ 10:

²⁶ Նույն տեղում, էջ 5:

կայն, հավանաբար, այն չի ուսումնասիրվել Մեհմեդ II-ի կողմից: Բավական երիտասարդ նվաճողը, որը շատ փառասեր էր, դժվար թե աննկատ թողներ այն աշխատանքը, որտեղ ինքը նկարագրվում է ամենադրական գծերով: Կա կարծիք, որ կամ աշխատանքը չի հասել սուլթանին, կամ վերջինս դրա մեջ չափազանց վառ գույներ է գտել և չի գնահատել այն²⁷: Հայտնի է, որ Մեհմեդը շատ բարձր էր գնահատում սեփական անձը: Պալատական նկարիչներն ամեն ինչ անում էին, որ նա կտավներում երևա որպես առնական և հզոր կերպար:

Նվաճողին ձոնված աշխատանքը գրված է հունարեն: Կրիտովուլոսը դա բացատրում է նրանով, որ, հավանաբար, շատ պատվարժան մահմեդականներ գրի կառնեն Մեհմեդի ու նրա նվաճումների մասին, սակայն ոչինչ չի կարող համեմատվել հունարենի հետ, քանի որ այդ լեզվով գրառումներն ավելի հասանելի է եվրոպացիներին²⁸: Մեր ունեցած տվյալների համաձայն, այն անտիպ վիճակում, հունարեն բնագրով հայտնաբերվել է 1859 թ. օսմանյան պալատի գրադարանում:

Կրիտովուլոսի աշխատությունը տարբեր պատմաբանների մոտ տարբեր արձագանքներ է ունեցել: Նրա միևնույն մտքերի նկատմամբ եղել են հակասական մոտեցումներ: Պատմաբանների մեծ մասը ակնհայտ են համարում Կրիտովուլոսի թուրքամետությունը: Հունգարացի գիտնական Ե. Դարկոն Կրիտովուլոսին համարում է հակահունական հոսանքի տիպիկ ներկայացուցիչ՝ նկատելով նրա մեջ եսասիրություն և արևելյան կողմնորոշում: Ըստ այս հեղինակի՝ եթե Լ. Խալկոկոնոնիլեսի մեջ նկատելի է հելլենական, Մ. Դուկասի մեջ՝ հռոմեական, Գ. Մֆրանձիի մեջ ուղղափառ-քրիստոնեական տարրեր, ապա Կրիտովուլոսը ավելի շատ հակված էր դեպի Արևելք՝ դեպի թուրքական կողմը՝ ներկայացնելով արևելյան տարրը²⁹: Ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին Կրիտովուլոսին համարում է դավաճան՝ նշելով, որ Կոստանդնուպոլսի գրավման ժամանակ հույներից կային մարդիկ, ովքեր հեշտությամբ ընդունեցին թուրքական իշխանությունը: Դրանցից էր Մեհմեդ II-ի պատմագիր Կրիտովուլոսը³⁰: Հունական պատմագրությունը Կրիտովուլոսին համարում է կարևոր սկզբնաղբյուր՝ միաժամանակ ընդունելով նրա գաղափարների հակասական և ցայտուն թուրքամետ լինելը:

Եվրոպացի պատմաբան Ս. Ռանսիմենը, չժխտելով Կրիտովուլոսի թուրքամետությունը, փաստում է, որ բացի այն տողերից, որտեղ պաշտպանում է սուլթանի հեղինակությունը, նա մնում է արդարամիտ և ճշմարիտ հեղինակ³¹:

Գ. Շլումպերժեն ևս ուսումնասիրել է Կ. Պոլսի անկումը և լայնորեն օգտվել Կրիտովուլոսի հաղորդած տեղեկություններից: Հեղինակը, չէշտելով Կրիտովուլոսի թուրքամետ հայեցվածքը, ընդգծում է նրա փքուն ոճը, երբ նկարագ-

²⁷ З. В. У д а л ь ц о в а. Предательская политика феодальной знати Византии..., с. 105.

²⁸ K r i t o v o u l o s. Նշվ. աշխ., էջ 5, 6, З. В. У д а л ь ц о в а. Предательская политика феодальной знати Византии..., с. 10. Մրանից հետո միայն այն թարգմանվել է հունգարերեն, թուրքերեն, հետագայում՝ անգլերեն: Հեղինակն ունեցել է նաև այլ աշխատություն, որը, սակայն, մեզ չի հասել:

²⁹ З. В. У д а л ь ц о в а. Предательская политика феодальной знати Византии..., с.105.

³⁰ В. А. Г о р д л е в с к и й. Избранные сочинения (Стамбул в XVI веке). Т. IV, М., 1968, с. 21.

³¹ С. Р а н с и м е н. Նշվ. աշխ., էջ 170:

րում է թուրքերի թալանն ու կողոպուտը. «Ահավասիկ Կրիտոպոլսի՝ իր սովորական ուռուցիկ ոճով արած նկարագրությունը այս կողոպուտին մասին»³²:

Ըստ Մ. Ներսիսյանի՝ գոյություն են ունեցել թուրքամետ պատմիչներ՝ «պատմության կեղծարարներ», որոնց տիպիկ ներկայացուցիչն է Կրիտոպոլսուրը. «Առհասարակ, Կրիտոպոլսուրը ներշնչանքի անսպառ աղբյուր է թուրքամետ պատմագրության համար և իր երկով ցուցադրում է այն իրողությունը, որ Օսմանյան Թուրքիայի նվաճողական քաղաքականության սկզբնավորման հետ միաժամանակ ի հայտ է եկել այդ նվաճումները հիմնավորող և դրանց հետագա ծավալումը խրախուսող կողմնակալ պատմագրությունը»³³: Ըստ հեղինակի՝ այդ ժամանակներում արդեն իսկ հանդես են եկել թուրքամետ պատմիչներ:

Որոշ պատմաբաններ, սակայն, արժևորում են Կրիտոպոլսուի աշխատանքն ու նրա հակահունական դիրքորոշումը: Նրանցից է գերմանացի գիտնական Ադոլֆ Դեյսմանը, որը, անտեսելով Մեհմեդի արյունոտ ռազմական արարքները, նրան համարում է գիտության ու արվեստի երկրպագու: Մեհմեդի գովերգու Կրիտոպոլսուն այս հեղինակի կողմից փառաբանվում է՝ որպես մեծ պատմիչ³⁴:

Ֆրանսիացի պատմաբան Մ. Ուրիշինին արդարացնում է Կրիտոպոլսուին, ճշմարտացի համարում նրա այն տեսակետը, որ Բյուզանդական կայսրության անկման պատճառը հույները չէին, այլ դեպքերի բնականոն ընթացքը³⁵: Նրա կարծիքով՝ նվաճողի՝ հույների նկատմամբ ունեցած դրական վերաբերմունքը չէր արդարացնում հույն այն պատմիչներին, որոնք հակառակն էին ներկայացնում իրավիճակը³⁶: Ըստ հեղինակի՝ Կրիտոպոլսուր մեծ քաղաքական գործիչ էր, որը ցանկանում էր սերունդներին ներկայացնել ոչ թե թուրքերի, այլ միայն Մեհմեդ II-ի սխրանքները՝ որպես քաջության ու հերոսության վառ օրինակ:

Մեր գիտնական Ռադոնիչը Կրիտոպոլսուի երկը համարում է XV դ. բոլոր սկզբնաղբյուրներից ամենագնահատելին: Նա պնդում է, որ դա կարևոր սկզբնաղբյուր է ոչ միայն հույների և թուրքերի, այլև սերբերի, բուլղարների, հունգարների համար³⁷:

Կրիտոպոլսուին և նրա աշխատությունը «ճշմարտացի» համարող այս պատմաբաններին քննադատության է արժանացնում Զ. Վ. Ուդալցովան իր հոդվածում: Հեղինակը, հանգամանորեն ուսումնասիրելով Կրիտոպոլսուի աշխատանքը, գալիս է այն եզրահանգման, որ թուրքական տիրապետության ժամանակ վերջինս արդեն պատկանում էր թուրքասերների թվին, օգտվում էր ազդեցիկ թուրքերի հովանավորությունից ու աջակցությունից: Սակայն նա չի գործել միայնակ, ունեցել է համախոհներ, այլապես նրան չէր հաջողվի այդ-

³² Գ. Շ լ յ ու մ բ եր ժ ե. նշվ. աշխ., էջ 289:

³³ Մ. Ն եր ս ի ս յ ա ն. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850-1890 թթ., Երևան, 2002, էջ 445-446:

³⁴ 3. В. У д а л ь ц о в а. Предательская политика феодалной знати Византии..., с.102.

³⁵ M. U b i c i n i. Letters on Turkey. V. II. London, 1856, p. 30.

³⁶ Նույն տեղում:

³⁷ 3. В. У д а л ь ц о в а. Предательская политика феодалной знати Византии..., с. 103.

քան արագ համոզել իր հայրենակիցներին՝ թուրքերին հանձնել Իմբրոս կղզին³⁸: Սուլթանը, որի համար Իմբրոսի նվաճումը դժվարություն չէր կարող ներկայացնել, հավանաբար, ցանկացել է Կրիտովուլոսի միջնորդությամբ այն առանց կովի ստանալ՝ խոստանալով գերծ թողնել թալանից ու կողոպուտից:

Կրիտովուլոսի մեջ թուրքամետությունը սքողվում է, երբ նա գովերգում է ոչ թե թուրքական գործին, ժողովրդին կամ նրա մշակույթը, այլ սուկ Մեհմեդ II-ին: Այստեղ, հավանաբար, պիտի խոսել այլ՝ պարսկական հոսանքի մասին: Իրոք, եղել է այդպիսի հոսանք և դրա ներկայացուցիչն է Կրիտովուլոսը, որն իր ազգի թերությունները բացահայտում է վիրավորված, պարսկած կողմի տեսանկյունից՝ բնավ չմոռանալով իր հույն լինելը: Մա, սակայն, չի նշանակում, թե նա թուրքամետ չէ: Նրա թուրքամետությունն ակնհայտ է, և որքան էլ որ փորձ արվի նրա այս կամ այն միտքը հակառակը մեկնաբանել, պարզ է, որ հեղինակի թուրքամետությունը հասնում է նույնիսկ պատմությունը կեղծելուն:

Չնայած իր թուրքամետությանը՝ Կրիտովուլոսը հարգալից վերաբերմունք ունի դեպի կայսր Կոստանդինը և ցավով պատմում է, թե ինչպես վերջինս նախընտրեց զոհվել իր հպատակների հետ, իրեն նետեց թշնամիների մեջ և մարտի թոհուրոհում կտոր-կտոր եղավ³⁹: Հեղինակի խոր հարգանքը նկատելի է նաև այս տողերում. «Նա հրաշալի մարդ էր, իմաստուն, պարտաճանաչ, առաքինի, պերճախոս, խելացի, հասարակական գործերում հաջողություն էր ունենում իր արժանիքների շնորհիվ»⁴⁰:

Ջարմանալին այն է, որ այսպիսի եզրահանգումներին հաջորդում են նաև սուլթանի ապրումները, կործանված, ավերված քաղաքի համար նրա ցավը նկարագրող տողեր, որ ավելի շատ խոսում է հեղինակի՝ թատերայնության հանդեպ հակումների, քան անկեղծ զգացումների մասին. «Սուլթանը մտավ քաղաք, շրջվեց, որ տեսնի տների մեծությունը, գեղեցկությունը, հասարակական կառույցները, տեսավ նավահանգիստներ, զինանոցներ, մեծաթիվ սպանված մարդկանց: Նա լցվեց կարեկցությամբ, նրա աչքերից արցունքներ թափվեցին: Նա հոգեպես տառապում էր դրա համար. այս քաղաքում մի այնպիսի աղետ է եղել, որ ոչ մի քաղաքում չէր կատարվել»⁴¹: Հազիվ թե սուլթանը այդչափ հուզված լիներ, քանի որ հենց ինքն էր իր զինվորներին խրախուսել՝ կողոպուտելու և թալանելու քաղաքը: Հայտնի է, որ պաշարման վերջին օրերին

³⁸ Նույն տեղում, էջ 108:

³⁹ Critobul din Imbros. Din domnia lui Mahomed al II-lea anni 1451–1467, ed. De Vasile Grecu, Busuresti, 1963, p. 159; Kritovoulos. Նշվ. աշխ., էջ 81:

⁴⁰ Kritovoulos. Նշվ. աշխ., էջ 81: Կայսեր նկարագրության ժամանակ հեղինակը չափազանցության չի գնում, քանի որ ժամանակի գրեթե բոլոր պատմիչները Կոստանդինին վերաբերվում են մեծ հարգանքով և դրական են նկարագրում նրան: Իր բոլոր նկարներում նա հանդես է գալիս որպես վեհության մարմնացում: 1453 թ. մայիսի 29-ին վերաբերող նկարում անգամ կայսրը աչքի է ընկնում իր վեհ ու գեղեցիկ հագուստով: Կոստանդին կայսեր բոլոր նկարների ուսումնասիրությանն է անդրադարձել Ս. Լամբրոսը. տե՛ս Λαμβρός Σ., Αι εικονές Κωνσταντίνου Παλαιολόγου.– Νέος ελληνισμῶν Αθήναι, 1906, № III, σ. 229–230, Αθήναι, 1907, № IV, σ. 234. Հեղինակը հատուկ ուշադրության է արժանացնում մի կտավ, ուր կայսրը մեծ պատկառանք էր ներշնչում իր երկար, ոտքերին հասնող համազգեստով, ալեխառն, թավշե մորուսով:

⁴¹ Kritovoulos. Նշվ. աշխ., էջ 76:

սուլթանը ոգեշունչ կոչով դիմել է իր զինվորներին՝ խոստանալով մեծամեծ պարգևներ. «Ես ուզում եմ ձեզ ցույց տալ, թե որքան շատ են պարգևները և հաղթանակին ինչ մեծ ճոխություն է հաջորդում»⁴²: Անկասկած, խոսքը մայրաքաղաքի առմանը հաջորդող և նվաճողներին սպասող անսպառ հարստության՝ ավարի ու կողոպուտի մասին էր: Հայտնի է նաև, որ սուլթանը թույլ է տվել իր զինվորներին երեք օր թալանել քաղաքը և այն գրավելուց մի քանի օր անց է այնտեղ մտել:

Կրիտոպոլսուի աշխատությունը Կոստանդնուպոլսում և այլուր ձեռնարկված քաղաքաշինության, պարսպապատման, տաճարների, զինանոցների, բաղնիքների և այլնի կառուցման վերաբերյալ կարևոր վկայություն է: Սա մի ինքնատիպ հուշակոթող է, որը վկայում է Կոստանդնուպոլսի հույն, հայ, հրեա համայնքների կազմավորման, բռնագաղթերի, քաղաքի վերակառուցման միջոցների վերաբերյալ: Հեղինակի վկայությամբ Մեհմեդը կարևոր պաշտոններ էր տալիս հույներին, վերաբնակեցվածներին ապահովում տնով, տալիս փրկագնվելու իրավունք, որպեսզի նրանք նպաստեին քաղաքի բարգավաճմանը⁴³: Դժվար թե Կրիտոպոլսն այս տողերով խնկարկում էր նվաճողին, քանի որ սուլթանի՝ ժամանակավորապես արտոնություններ տալը թելադրված էր ոչ թե մարդասիրությամբ, այլ իր մայրաքաղաքն ու կայսրությունը շենացնելու մտահոգությամբ: Այսուհանդերձ, հեղինակի գրչի տակ Մեհմեդը միշտ հանդես էր գալիս որպես բարեգործ: Կրիտոպոլսն իր նկարագրություններով քողարկում է նվաճողի դաժան կերպարը, որի արյունոտուշտ արարքների մասին գրում են անգամ թուրք հեղինակները⁴⁴:

Չնայած Կրիտոպոլսուի որոշակի սուբյեկտիվիզմին և անսքող համակրանքին Մեհմեդ II Նվաճողի նկատմամբ, այսուհանդերձ նրա աշխատանքը համարվում է անգնահատելի և անհամեմատելի՝ իբրև սկզբնաղբյուր: Չկա XV դ. հույների պատմությանը վերաբերող ոչ մի աշխատություն, որը փաստական տեսակետից չհենվի Կրիտոպոլսուի շարադրանքի վրա:

ГРЕЧЕСКИЕ ПЕРВОИСТОЧНИКИ
О ЗАХВАТЕ КОНСТАНТИНОПОЛЯ

МАРИЯ БРУТЯН

Р е з ю м е

Захват Константинополя турками в 1453 г. описывали также и греческие историки, по-разному трактуя эти события. Единственный очевидец – Г. Франдзи катастрофически воспринимал создание унии, но отмечал, что у греков не было иного выхода. Большое значение имеет находящийся в Матенадаране уникальный армянский перевод рукописи Франдзи, где автор

⁴² Critobul din Imbros. Նշվ. աշխ., էջ 133, K r i t o v o u l o s. Նշվ. աշխ., էջ 60:

⁴³ H. I n a l c i k. The Ottoman Empire: Conquest, Organization and Economy. London, 1978, p. 148.

⁴⁴ Մեհմեդ II-ի կազմակերպած 1464 թ. գաղթի և դաժանությունների մասին է նկարագրում Գ. Այվազովսկին, որը հենվում է թուրքական աղբյուրների վրա (տե՛ս Գ. Այվազովսկի. Պատմություն Օսմանեան պետության. հ. II, Վենետիկ, 1841, էջ 160):

описывает героизм греческого народа. Очевидцем падения Константинополя является М. Дукас, который был представителем латинской ветви. Он считал объединение церковей единственным выходом в противостоянии турецкому захвату. Представителями туркофильского течения являются Критовулос и Л. Халкокондилес. Последний издал свою рукопись в старости, допустив некоторые неточности. Достаточно спорным автором является Критовулос, который будучи греком, восхваляет Мехмеда II, забывая его жестокость и хладнокровие. Некоторые историки, например, А. Дейсман, М. Убичини, Радонич и другие высоко ценили Мехмеда и восхваляющего его Критовулоса. Однако есть авторы, которые раскрывают лживость Критовулоса. Среди них З. Удальцова, М. Нерсисян и другие.

THE GREEK SOURCES ON THE CAPTURE OF CONSTANTINOPLE

MARIA BRUTYAN

S u m m a r y

The capture of Constantinople by the Turks in 1453 was also presented by Greek historians, treating this incident differently. The only witness – G. Phrantzes considered the union of Catholic and Orthodox Churches dangerous but he mentioned that the Greeks didn't have any other choice. The translation of the work by Phrantzes, kept in the Matenadaran, describes the courage of the Greeks. M. Dukas is another witness of the fall of Constantinople, who was for catholics. This author considered the union of the churches the only way to get rid of the Turkish conquest. The representatives of the pro-Turkish ideas are Kritovoulos and L. Khalkokondiles. There are a lot of mistakes in the latter's work. Kritovoulos has many contradicting ideas: being Greek by origin he praises Mehmed II and his activities. The fact that there were some people who shared his opinion is of great interest. They were Adolf Deysman, M. Ubicini, Radonich. But there are also some historians who consider the history of Kritovoulos full of fakes. Among these authors are Z. Udaltsova, M. Nersisyan and others.